ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մայիսի 2015 թվականի N72-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 28-ի «2015 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր սահմանելու մասին» N27-Ա որոշման 1-ին կետի, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Արևիս գյուղական համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու հերթական ընտրությունները նշանակել 2015 թվականի սեպտեմբերի 13-ին:
2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված համայնքի գործող տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ավարտման օրն է 2015 թվականի սեպտեմբերի 26-ը:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թ. մայիսի 29
ք. Կապան